# «ԱՍԱԼԱՆ Ադրբեջանում է»

## ՀԱՅՏԱՐԱՐՈՒՄ Է ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՊԱԿ-Ը

Թուրքական «Հյուրրիյեթ» և «Թերջուման» թերթերը հունիսի 8-ին, հենվելով Անատոլիական գործակալության Մոսկվայի թղթակցի հաղորդագրության վրա, հրապարակել են երկու տարբեր հոդվածներ: «Հյուրրիյեթ»-ի հոդվածը կրում է *«ԱՍԱԼԱն շարունակում է գոյատևել»* խորագիրը: Իսկ «Թերջուման»-ի հոդվածը, որն ունի նաև *«Հայաստան զենք են տեղափոխում»* ենթավերնագիրը, հրապարակվել է «ԱՍԱԼԱն Ադրբեջանում է» վերնագրով: Այդ երկու վերնագրերն էլ վերցված են խորհրդային ՊԱԿ-ի սահմանադրական կարգերի պաշտպանության բաժնի վարիչ Վալերի Վորոնցիկովի հայտարարություններից: Ըստ երևույթին, կենտրոնը զգալով, որ չի հաջողվում հայ գրոհայինների վարկածով արդարացնել հայերի դեմ բռնարարքները, համաշխարհային հասարակական կարծիքը խաբելու մի նոր փորձ է կատարում: Այս անգամ արդեն գործի է դրվում ՊԱԿ-ը, առաջ քաշելով «Լեռնային Ղարաբաղում ԱՍԱԼԱյի առկայության» վերաբերյալ հնարովի մի նոր վարկած: Այն, որ Վորոնցիկովի հայտարարությունները զուրկ են ամեն տեսակի կշռադատվածությունից, մեզ չի զարմացնում: Քաջատեղյակ լինելով Լատվիայում, Լիտվայում և Էստոնիայում ծավալվող դեմոկրատական շարժումների հանդեպ ՊԱԿ-ի դիրքորոշմանը, չենք զարմանում նաև իր արտասահմանից Հայաստան գաղտնի տեղափոխված զենքը Մերձբալթյան հանրապետությունների նավահանգիստներում բեռնաթափելու վերաբերյալ Վորոնցիկովի հայտնագործության վրա: Սակայն, երբ հայերը Լիբանանից զենքը նավերով տեղափոխում են Մերձբալթիկա, բեռնաթափում, այն հասցնում անընդհատ շրջափակման օղակի մեջ գտնվող Լեռնային Ղարաբաղ, և ինքը՝ ամենազոր ՊԱԿ-ը տեղյակ լինելով հանդերձ այդ բոլորին, ոչ մի կերպ չի կարողանում կանխել այդ ձեռնարկումը, այլ պարզապես խեղճացած իր դժգոհությունն է հայտնում հայերից, դա արդեն խիստ զարմանալի է: Ուզում ենք ասել, որ այդ եղանակով ոչ ոքի չես խաբի, բացի նման դեպքերում խաբվելու մեծ ցանկություն դրսևորող «Հյուրրիյեթ»-ից ու «Թերջուման»-ից: Համենայնդեպս թուրքական թերթերը հնարավորություն են տալիս մեզ ծանոթանալու խորհրդային գրպարտչական մի նոր դրսևորման հետ:

Հաշվի առնելով այն, որ «Թերջուման»-ում լույս տեսած հոդվածը զգալիորեն ծավալուն է, քան «Հյուրիիյեթ»-ինը, հետևաբար մենք նպատակահարմար ենք գտնում հենց դա էլ ներկայացնել ընթերցողի ուշադրությանը:

*«Թերջուման», հունիսի 8.* Վերջերս Խորհրդային Միության պետանվտանգության կոմիտեն հայտարարեց, թե ԱՍԱԼԱն շարունակում է իր գործունեությունը և կարևոր դեր է կատարում արտասահմանից Հայաստան գաղտնի զենք տեղափոխելու գործում: Ինչպես հայտնի է, այդ կազմակերպությունը, սկսած 1975-ից, ահաբեկում էր թուրք դիվանագետներին նրանց դեմ մահափորձեր կատարելով:

ՊԱԿ-ի սահմանադրական կարգերի պաշտպանության բաժնի վարիչ Վալերի Վորոնցիկովը, ելույթ ունենալով մամուլի ասուլիսում, ուր նա ահաբեկչության դեմ երկրում ձեռնարկվող միջոցառումների վերաբերյալ լրագրողներին տեղեկություններ էր տալիս, անդրադարձավ ԱՍԱԼԱյի գործունեությանը: Նշելով, թե ԱՍԱԼԱյի գործունեության մեջ, որը 70-ական թվականների վերջերին մեծ թափ էր ստացել և 80-ականների երկրորդ կեսին հետզհետե անկում նկատվել, ասաց. *«Բոլոր հիմքերն ունենք ենթադրելու, որ այդ կազմակերպությունը ներկայումս գտնվում է աշխուժացման շեմին»*: Վորոնցիկովն առանձնակի ուշադրություն դարձրեց այն հանգամանքի վրա, որ սփյուռքից ստացած նյութական միջոցների շնորհիվ իր գործունեությանը շարունակ նոր թափ հաղորդող ԱՍԱԼԱն կարևոր դեր է կատարում արտասահմանից Հայաստան գաղտնի զենք փոխադրելու մեջ: Ըստ Վորոնցիկովի, այդ զենքը պահեստավորվում է Լիբանանի Տրիպոլի քաղաքում, ուր տեղակայված է ԱՍԱԼԱյի բազան, ապա նավերով տեղափոխվում է ԽՍՀՄ և բեռնաթափվում Մերձբալթյան հանրապետությունների ու Կալինինգրադի նավահանգիստներում:

Անդրադառնալով ԱՍԱԼԱյի անդամ երկու ահաբեկիչների «Լեռնային Ղարաբաղ ներթափանցելու» վերաբերյալ ԱՄՆ-ում հրատարակվող հայկական թերթերից մեկի կողմից անցյալ տարվա աշնանը հրապարակված տեղեկությանը, Վորոնցիկովը հավաստեց, որ դա ապացուցված ճշմարտություն է և համապատասխանում է իրականությանը: Վալերի Վորոնցիկովը մտահոգություն հայտնեց, որ եթե կարճ ժամանակամիջոցում չհաջողվի թուլացնել Հայաստանի և Ադրբեջանի միջև լարվածությունը, ապա դա առիթ կծառայի, որպեսզի ԱՍԱԼԱն մեծ թվով ահաբեկիչների գործուղի Լեռնային Ղարաբաղ:

ՊԱԿ-ի պատասխանատու աշխատողը ԱՍԱԼԱյին բնութագրելով «զուտ ահաբեկչական կազմակերպություն», ասաց, որ նրա անդամների թիվը գործունեության ամենաեռուն շրջանում կազմում էր շուրջ 300 հոգի:

ԱՍԱԼԱն Հայաստանի ազատագրության հայ գաղտնի բանակ է: Վոլֆան Վուրալի հայտարարությունները գալիս են պաշտոնապես հաստատելու, որ կազմակերպության 1989 թվականից ի վեր Լեռնային Ղարաբաղ ներթափանցելու վերաբերյալ տարածում գտած տեղեկությունները ճշմարտացի են:

Մինչդեռ, Մոսկվայում Թուրքիայի դեսպան Վոլֆան Վուրալի Երևան կատարած պաշտոնական այցի ժամանակ Հայաստանի արտաքին տնտեսական հարաբերությունների նախարար Եսայի Ստեփանյանը հայերի մուտքը Թուրքիա դյուրացնելու պահանջով դիմել էր նրան և պատասխանելով ահաբեկչության առկայության սպառնալիքի վերաբերյալ թուրքական կողմի փաստարկին, հայտարարել էր. *«Ինչքան ինձ հայտնի է, ԱՍԱԼԱն այլևս գոյություն չունի»*:

■